

«ԵՐԵՎԱՆԻ ՁԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
2016թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2017

Բովանդակություն

Խորհրդի կազմ	3
Անկախ աուդիտորի եզրակացություն	4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	8
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

խորհրդի կազմ

Հովհաննես Բուրմանյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ, խորհրդի նախագահ
Հայկ Խաչատրյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի օգնական
Ռուբիկ Դավթյան	ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետի խորհրդատու
Արմեն Մելիք-Խսրայելյան	ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ
Արտակ Ալբերտյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության էներգետիկայի և տնտեսության այլ ոլորտներում բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ
Ստեփան Պետրոսյան	ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ (ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր)
Նատալյա Սարգսյան	«Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ կորպորատիվ և Հասարակայնության հետ կապերի դեպարտամենտի պետ
Սասուն Խաչատրյան	«Երևան ԶԷԿ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ղեկավարությանը

Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Վերապահումով Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

1. Ինչպես ներկայացված է սույն ֆինանսական հաշվետվություններին կից 1 և 4 ծանոթագրություններում, Ընկերությունը 2010թ. սկսել է նոր էլեկտրակայանի շահագործումը, իսկ հին էլեկտրակայանը հանվել է շահագործումից և պահվում է որպես պահուստային հզորություն: Այս հանգամանքը, նշված ծանոթագրություններում նշված այլ գործոնների հետ համատեղ, մատնանշում է, որ Ընկերության հիմնական միջոցների մեջ ներառված հին էլեկտրակայանի համար, որի հաշվեկշռային արժեքը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 12,570,460 հազար դրամ, առկա են արժեզրկման հայտանիշներ: Ընկերությունը չի իրականացրել տվյալ հիմնական միջոցի փոխհատուցվող արժեքի գնահատում՝ համաձայն ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի պահանջների:

Մենք անկարող էինք որոշել հնարավոր արժեզրկման ազդեցությունը ֆինանսական հաշվետվություններին վրա:

2. 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառված են 8,362,176 հազար դրամ հաշվեկշռային արժեքով ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ, որոնց գծով առկա են արժեզրկման հայտանիշներ:

Ընկերությունը չի իրականացրել տվյալ ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատում՝ համաձայն ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի պահանջների:

Մենք անկարող էինք որոշել հնարավոր արժեզրկման ազդեցությունը ֆինանսական հաշվետվություններին վրա:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ "SOS-AUDIT" LTD

Մենք անկախ ենք Ընկերությունից համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք - աուդիտի շրջանակ

Ընկերության 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2016թ. հունիսի 29-ին արտահայտել է «Վերապահումով կարծիք»՝ պայմանավորված շահագործումից հանված հին էլեկտրակայանի գծով արժեզրկման գնահատում չիրականացնելու հանգամանքով: Նշված հանգամանքը դեռևս տեղին է հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առումով, և ներառվել է մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:



"ՍՕՍ-ԱՌԻԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի քիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերականգնման և Ջարգացման Միջազգային Բանկի (ՎՋՄԲ) միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված 8615-AM Վարկային համաձայնագրի 2-րդ բաժնի C.2.a.(vi) կետի, և ՀՀ ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2016թ. հունիսի 14-ին ստորագրված Ենթավարկային համաձայնագրի 4.14 կետի, Ընկերությունը պարտավորվել է չկրել որևէ ծախս, պարտք կամ պարտավորություն, և չտրամադրել վարկեր կամ դրամաշնորհներ Ընկերության հիմնական գործունեության՝ էներգիայի արտադրության հետ չկապված նպատակների համար:

Մեր կարծիքով, Վարկային համաձայնագրի ստորագրման ամսաթվից՝ 2016 մայիսի 12-ից մինչև հաշվետու ամսաթիվը՝ 2016 դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանում Ընկերությունը պահպանել է նշված վավերապայմանը:

27 հունիսի 2017թ.

"ՍՕՍ-Աուդիտ" ՍՊԸ

Սամվել Դազարյան
Տնօրեն

Գ.Նել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՍԱՄԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծնք.	31.12.2016թ. հազար դրամ	31.12.2015թ.* հազար դրամ	01.01.2015թ.* հազար դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	123,079,995	127,707,236	135,797,953
Ոչ նյութական ակտիվներ		15,340	2,088	2,520
Հետաձգված հարկային ակտիվ	5	1,695,935	2,377,511	409,493
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	6	8,386,514	8,388,166	5,763,624
		<u>133,177,784</u>	<u>138,475,001</u>	<u>141,973,590</u>
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	7	5,540,199	5,773,106	5,801,801
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	15,429,167	24,658,613	14,531,947
Դրամական միջոցներ	9	1,461,395	3,099,856	804,192
		<u>22,430,761</u>	<u>33,531,575</u>	<u>21,137,940</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<u>155,608,545</u>	<u>172,006,576</u>	<u>163,111,530</u>
Բաժնետիրական կապիտալ	1.2	12,047,679	11,459,612	743,717
Վերագնահատման պահուստ		10,775,254	11,687,193	15,703,534
Էմիսիոն եկամուտ		1,069,801	-	-
Կուտակված վնաս		<u>(13,466,851)</u>	<u>(12,630,934)</u>	<u>(11,275,511)</u>
		<u>10,425,883</u>	<u>10,515,871</u>	<u>5,171,740</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	11	112,519,349	102,769,828	107,404,956
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	33,295	38,174	39,181
		<u>112,552,644</u>	<u>102,808,002</u>	<u>107,444,137</u>
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	11	8,185,296	10,449,472	20,112,106
Եկամուտներին վերաբերող շնորհներ	13	417,871	435,315	439,746
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	24,026,851	46,941,367	29,657,426
Շահութահարկի գծով պարտավորություն		-	856,549	286,375
		<u>32,630,018</u>	<u>58,682,703</u>	<u>50,495,653</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<u>155,608,545</u>	<u>172,006,576</u>	<u>163,111,530</u>

(*) Համեմատական գումարները վերաներկայացվել են (ծնք. 3.21):

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2017թ. հունիսի 27-ին: Կից ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Գլխավոր տնօրեն
Սասուն Խաչատրյան



Հաշվապահական ծառայության ղեկավար
Գարրի Ախոյան



ՀԱՍՏՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՍԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

	Ծնք.	2016 հազար դրամ	2015 հազար դրամ
Հասույթ	15	70,031,636	68,610,206
Վաճառքի ինքնարժեք	16	(63,024,140)	(61,907,263)
Համախառն շահույթ		7,007,496	6,702,943
Այլ եկամուտ		459,376	328,362
Վարչական ծախսեր	17	(601,260)	(615,642)
Այլ ծախսեր	18	(2,735,603)	(7,902,625)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		4,130,009	(1,486,962)
Ֆինանսական եկամուտ	19	-	561,589
Ֆինանսական ծախսեր	19	(1,343,880)	(1,608,146)
Ֆինանսական ակտիվների արժեզրկում		-	(3,160,116)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ	20	(3,852,409)	(682,082)
Վնաս մինչև հարկումը		(1,066,280)	(6,375,717)
Շահութահարկի գծով փոխհատուցում / (ծախս)	21	(681,576)	1,003,953
Տարվա վնաս		(1,747,856)	(5,371,764)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(1,747,856)	(5,371,764)

Գլխավոր տնօրեն
Սասուն Խաչատրյան




Հաշվապահական ծառայության ղեկավար
Գարրի Ախոյան



ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

Բաժնետիրական կապիտալ	Վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս*	Էմիսիոն եկամուտ	Ընդամենը
հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2014թ.՝	15,703,534	(11,123,076)	-	5,324,175
ճշգրտումներ*	-	(152,435)	-	(152,435)
Մնացորդն առ 1 հունվարի 2015թ.՝	15,703,534	(11,275,511)	-	5,171,740
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(5,371,764)	-	(5,371,764)
Գործարքներ բաժնետերերի հետ	-	-	-	10,715,895
Վերագնահատման պահուստի օգտագործում	(4,016,341)	4,016,341	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2015թ.՝	11,687,193	(12,630,934)	-	10,515,871
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(1,747,856)	-	(1,747,856)
Բաժնետոմսերի թողարկումից	-	-	1,151,629	1,789,018
Գործարքներ բաժնետերերի հետ	-	-	(81,828)	(131,150)
Վերագնահատման պահուստի օգտագործում	(911,939)	911,939	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2016թ.՝	10,775,254	(13,466,851)	1,069,801	10,425,883

(*) Համեմատական գումարները վերաներկայացվել են (ծմբ. 3.21):

Գլխավոր տնօրեն
Սասուն Խաչատրյան

Հաշվապահական ծառայության ղեկավար
Գարրի Ախոյան



ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*«Երևանի Զերմաշինարարականություն» ՓԲԸ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

	2016 <u>հազար դրամ</u>	2015 <u>հազար դրամ</u>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Հաճախորդներից մուտքեր	59,727,693	48,593,832
Մատակարարներին վճարումներ	(60,771,672)	(29,200,422)
Աշխատակիցներին վճարումներ	(474,483)	(726,334)
Վճարված հարկեր	(1,323,247)	(4,652,816)
Վճարված շահութահարկ	(1,443,568)	(458,698)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>(4,285,277)</u>	<u>13,555,562</u>
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Փոխառությունների տրամադրում	-	(1,013,990)
Տրամադրված փոխառությունների մարում	1,702	-
Հիմնական միջոցների դիմաց վճարումներ	(51,343)	-
Ոչ նյութական ակտիվների դիմաց վճարումներ	(6,026)	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>(55,667)</u>	<u>(1,013,990)</u>
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	21,653,110	10,270,945
Վարկերի և փոխառությունների մարում	(19,341,038)	(13,824,904)
Վճարված տոկոսներ	(1,329,931)	(6,607,283)
Բաժնետոմսերի թողարկումից մուտքեր	1,789,018	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>2,771,159</u>	<u>(10,161,242)</u>
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>(1,569,785)</u>	<u>2,380,330</u>
Փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների վրա	(84,644)	(76,786)
Փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	15,968	(7,880)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	<u>3,099,856</u>	<u>804,192</u>
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	<u>1,461,395</u>	<u>3,099,856</u>

Գլխավոր տնօրեն
Սասուն Խաչատրյան



Հաշվապահական ծառայության ղեկավար
Գարրի Ախոյան




ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Կազմակերպությունը

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ընկերությունը հիմնադրվել է 1963թ: «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերությունը) ստեղծվել է 1997թ.:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝

- էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրություն և վաճառք,
- բնական գազի և էլեկտրաէներգիայի ներմուծում և արտահանում:

Ընկերության գործունեությունը՝ մերառյալ սակագնային քաղաքականությունը, կարգավորում է Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները կարգավորող Հանձնաժողովը:

Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի նախագծման աշխատանքները սկսել են 1959թ. Խորհրդային Միության «Տեպլոէլեկտրոպրոյեկտ» ինստիտուտի կողմից: Այն որոշվել է կառուցել Հայաստանի արդյունաբերական էներգատար կենտրոնները մեկում՝ Երևանի հարավային արդյունաբերական հանգույց: Երևանի ՋԷԿ-ի թվով յոթ տուրբոազրեգատներից առաջինը՝ 50 ՄՎտ հզորությամբ առաջին տուրբինային տեղակայանքը շահագործման է հանձնվել 1963թ., իսկ վերջինը՝ 1967թ.:

Շահագործման մեջ լինելով ավելի քան 40 տարի՝ էլեկտրակայանի ազրեգատները և օժանդակ սարքավորումները ենթարկվել են ֆիզիկական և բարոյական էական մաշվածության՝ սպառելով իրենց աշխատանքային նորմատիվային պաշարները, որի հետևանքով բնականաբար զգալիորեն ընկել է կայանի շահագործման հուսալիությունը և էլեկտրական ու ջերմային էներգիայի արտադրության արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և Ընկերության ղեկավարությունը բնական գազի այրմամբ գերժամանակակից համակցված շոգեգազային ցիկլով աշխատող մոտ էներգաբլոկի կառուցման միջոցով ձեռնամուխ են եղել Երևանի ՋԷԿ-ի վերակառուցման ծրագրի իրականացմանը: 2005թ. մարտի 29-ին ՀՀ կառավարության և միջազգային համագործակցության ճապոնիայի բանկի (ՄՀՃԲ) միջև ստորագրվել է վարկային պայմանագիր «Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանի (էներգաբլոկ) նախագծի» իրականացման վերաբերյալ: Նշված համաձայնագրի հիման վրա ՄՀՃԲ-ն ՀՀ կառավարությանը տրամադրվել է վարկ արտոնյալ պայմաններով՝ հատկացնելով 26,409 միլիոն ճապոնական իեն: Նոր գործարանի շինարարությունը սկսվել է 2006թ. և ավարտվել է 2010թ.: Այն շահագործման է հանձնվել 2010թ. ապրիլին:

Ներդրվող մոտ տեխնոլոգիաների շնորհիվ բարձրացել է կայանի ընդհանուր օգտակար գործողության գործակիցը՝ հասնելով մոտ 70%-ի, զգալիորեն նվազել է արտանետումների մակարդակը, ինչպես նաև խմելու ջրի ծախսը՝ ավելի քան 3 անգամ: Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2016թ. կազմել է 254 մարդ (2015թ.՝ 380 մարդ):

Ընկերության կանոնադրության փոփոխությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2006թ. սեպտեմբերի 08-ին, գրանցման համարը՝ 269.070.00255, վկայականը՝ 01 Ա 004948:

Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0053 ք. Երևան, Արիմ Բերդի փողոց 3-րդ նրբանցք, 3-րդ շենք:
Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02205028:

1.2 Կանոնադրական կապիտալ

Ընկերության միակ բաժնետերը հաշվետու ամսաթվին և նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետությունն է:

Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2016թ. դրությամբ կազմել է 12,047,679 հազար դրամ (31.12.2015թ.-ին՝ 11,459,612): Այն բաղկացած է 2,273,147 հատ հասարակ անվանական բաժնետոմսերից, յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 5,300 դրամ:

2. Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՄ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Ընկերությունը չի կիրառել ՖՀՄՄ-ների հրապարակված հետևյալ նոր ստանդարտները կամ փոփոխությունները, որոնք սակայն դեռևս ուժի մեջ չեն: Ընկերությունը դեռևս չի վերլուծել նոր ստանդարտների հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա:

- ՖՀՄՄ 9 “*Ֆինանսական գործիքներ*” (վերանայված 2014թ. հուլիսին) ստանդարտը ուժի մեջ է 2018թ. հունվարի 1-ից կամ՝ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Ստանդարտը փոխարինում են “Ֆինանսական գործիքներ ճանաչումը և չափում” ՀՀՄՄ 39-ին:

ՖՀՄՄ 9-ի ներուծում է նոր պահանջներ. ա/ ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների դասակարգման ու չափման պահանջների, բ/ արժեզրկման մեթոդաբանության, և գ/ հեղջի ընդհանուր հաշվառման վերաբերյալ:

- “*Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ*” ՖՀՄՄ 15-ը (հրապարակվել է 2014թ. մայիսին) ուժի մեջ են մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Կազմակերպությունները կարող են Ստանդարտը կիրառել հետընթաց կամ ընտրել ձևափոխված անցումային դրույթները՝ որով Ստանդարտը հետընթաց կիրառել միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք Ստանդարտի սկզբնական կիրառման պահին ավարտված չեն: ՖՀՄՄ 15-ը սահմանում է համապարփակ միասնական համակարգ հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման համար: ՖՀՄՄ 15-ի անցման ամսաթվի դրությամբ հետևյալ ստանդարտները և մեկնաբանությունները կորցնում են իրենց ուժը.

- ✓ ՀՀՄՄ 18, Հասույթ,
- ✓ ՀՀՄՄ 11, Կառուցման պայմանագրեր,
- ✓ ՖՀՄՄ-ի Մեկնաբանություն 13, Հաճախորդի հավատարմության ծրագրեր
- ✓ ՖՀՄՄ-ի Մեկնաբանություն 15, Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր,
- ✓ ՖՀՄՄ-ի Մեկնաբանություն 18, Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից,
- ✓ ՄՄ-ի Մեկնաբանություն 31, Հասույթ. բարտեռային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ:

- “*Վարձակալություն*” ՖՀՄՄ 16-ը (հրապարակվել է 2016թ. հունվարին) ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ, եթե կիրառվում է նաև ՖՀՄՄ 15-ը: Ստանդարտը փոխարինում է “Վարձակալություն” ՀՀՄՄ 7-ին:

ՖՀՄՄ 16-ի համաձայն վարձակալը ճանաչում է օգտագործման-իրավունքով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման-իրավունքով ակտիվը հաշվառվում է այլ ոչ-ֆինանսական ակտիվների մեջ և մաշեցվում է, իսկ պարտավորության գծով հաշվառվում է ֆինանսական ծախս:

Վարձակալը կարող է վարձակալության գծով վճարները հաշվառել ծախսեր ուղիղ-գծային կամ այլ համակարգված մոտեցումով, եթե

- Վարձակալության ժամկետը 12 ամիս է կամ պակաս - այս ընտրությունը կատարվում է ակտիվների դասի գծով;
- Վարձակալված ակտիվը նոր վիճակում ունի ցածր արժեք (օրինակ՝ անձնական համակարգիչներ կամ գրասենյակային մանր կահույք) - այս ընտրությունը կատարվում է առանձին վարձակալությունների գծով:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

3.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն: ՖՀՄՍ-ները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ստանդարտներն ու մեկնաբանություններն են: Դրանք բաղկացած են՝

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից,
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից,
- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) մեկնաբանություններից և
- Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) մեկնաբանություններից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.2 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

3.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

3.4 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ Դրամը: Այն հանդիսանում է մաս Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

3.5 Դատողությունների, գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3.5.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման վրա կարևոր ազդեցություն ունեցող դատողություններ

Հետևյալները Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման նպատակով ղեկավարության կողմից կատարված կարևոր դատողություններ են, որոնք էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

ա) Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ – ծնթ. 3.8 և 4

Հիմնական միջոցների օգտակար գործողության ժամկետները գնահատվել են հիմնվելով ակտիվների ակնկալվող օտագործման առավել հավանական գնահատումներից, ինչպես նաև, նրանց գծով օգտագործման շարունակման մտադրվածությունից ելնելով: Ղեկավարությունը կարծում է, որ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները էականորեն չեն տարբերվում իրենց տնտեսական հնարավոր ժամկետներից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտագործման ժամկետները տարբերվեն առկա գնահատումներից, ապա դա կունենա էական ազդեցություն ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Դերիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների արժեզրկում – ծնթ. 6 և 8

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը գնահատվում է պարբերաբար: 31.12.2016թ. դրությամբ, արժեզրկված դերիտորական պարտքերի գումարը ընթացիկ արժեքը կազմում էր՝ զրո (31.12.2015թ.: զրո), իսկ այլ ֆինանսական ակտիվների գծով 8,386,514 հազար դրամ (31.12.2015թ.՝ 8,388,166 հազար դրամ): Ղեկավարությունը կատարում է դատողություններ հիմնվելով ապագա դրամական հոսքերում փոփոխությունները՝ գնահատելու արժեզրկումից կորուստը, երբ հաճախորդը կամ փոխառու ունեն ֆինանսական դժվարություններ: Երբ, դերիտորական պարտքերի և այլ ֆինանսական ակտիվների գծով փաստացի փոխհատուցումը տարբերվում է ակնկալիքից, ապա տվյալ ակտիվների ընթացիկ արժեքը փոխվում է:

3.6 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքներում:

3.7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակներով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցների իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճն իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա երագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռ անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառվում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացվում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակմամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետներն են՝

Շենքեր և շինություններ	20 - 40 տարի
Էլեկտրակայաններ	40 տարի
Փոխանցող հարմարանքներ	5 - 40 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5 - 40 տարի

Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Արտադրատնտեսական գույք	5 – 40 տարի
Այլ հիմնական միջոցներ	2 – 10 տարի

3.8 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել լնկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

3.9 Պաշարներ

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է կշռված միջին բանաձևով:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, մասնավորապես ավտոմեքենաների ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման գուտ արժեքի նվազագույնով:

Պաշարների իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

3.10 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում, սկզբնական չափում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ լնկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատույցներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվել են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը

Հետագա չափումն իրականացնելու համար ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների սկզբնական ճանաչման ժամանակ բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

i. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ինչպես նաև մնացորդները դրամարկում և բանկերում:

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ ակտիվն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնականանհավանական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

Մնացորդներ դրամարկում և բանկերում

Մնացորդները դրամարկում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

ii. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է շահույթ կամ վնաս: սեփական կապիտալի գործարքներից առաջացած և շահույթում կամ վնասում ճանաչված վնասները չան հակադարձվում շահույթում կամ վնասում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են շահույթում կամ վնասում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել արժեզրկումից վնասը շահույթում կամ վնասում ճանաչումից հետո:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և հետագա չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են վարկերը և փոխառությունները և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

i. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

ii. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացիոն արժեքով:

3.11 Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա՞ է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք առկա՞ է ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվի (կամ միանման ակտիվների խմբի) արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Եթե առկա է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, Ընկերությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

3.12 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Վերագնահատման պահուստը ներառվում է հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներն ու վնասները:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.13 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.14 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.15 Կապակցված կողմերի բացահայտումներ

3.15.1. Կապակցված կողմ

Կողմը կապակցված է Ընկերությանը, եթե այդ կողմը.

ա/ ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ մեկ կամ ավելի միջնորդների միջոցով՝

- վերահսկում է Ընկերությանը (50% և ավելի մասնակցություն),
- գտնվում է ընդհանուր վերահսկողության տակ,
- Ընկերությունում ունի մասնակցություն, որը ապահովում է նշանակալի մասնակցություն (20-50% մասնակցություն/բաժնեմաս),
- համատեղ վերահսկողություն է իրականացնում Ընկերության նկատմամբ:

բ/ Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմի անդամ են՝

- տնօրենը,
- անձիք, որոնք ուղղակիորեն պատասխանատու են Ընկերության գործունեության պլանավորման, ուղղորդման և վերահսկողության համար:

գ/ վերոնշված անձանց ընտանիքի մտերիմ անդամ են՝

- անձի գույքըները (ամուսինը),
- անձի երեխաները:

3.15.2. Կապակցված կողմերի գործարքներ

